

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՐԱՖՖԻՆ՝ ԿՐԹՈՂ ԵՎ ԴԱՍԻԿԱԿՈՂ*

Անահիտ Աքայան

Բանալի բառեր՝ ուսուցման քարացած մեթոդներ, ինքնագործունեություն, ընտանեկան դաստիարակություն, ազգային կոլորիտ, սովորույթներ, մանկավարժական հայցըներ:

Հայ մեծանուն գրողներից շատերը միաժամանակ նշանավոր մանկավարժներ էին և դպրոցներում դասավանդում էին հայոց լեզու և գրականություն՝ դրանց ուսուցումը կազմակերպելով ժամանակի արաջավոր սկզբունքներով ու մեթոդներով։ Ուսուցման ընթացքում նրանք ոչ միայն ընդդանում էին սովորողների լեզվական ու գրականագիտական ունակությունները, այլև աշխարհաճանաչողությունը, նրանց մեջ մշակում ճաշակ, դաստիարակում հայրենասիրություն ու բարոյական վեճ հատկանիշներ, զարգացնում նրանց հոգևոր կարողությունները։

Դարասկարի հայ ժողովրդի կրթության գործը ավելի անմիջաբար վիճակում է գտնվել Արևմտյան Հայաստանում։ Ինքնուրույն պետականության բացակայությունը, թուրք կառավարության անձնությունը հայահայած քաղաքականությունը տնտեսական ու քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում լուրջ խոչընդոտուններ էին ստեղծել Արևմտյան Հայաստանում՝ դպրոցների գործունեության, հայագիտական առարկաների դասավանդման համար։

Ազգային ոգին արտօհայտող գրականության ուսուցման դերը բարձր է գնահատել հայ մեծանուն վիպասան Ռաֆֆին։ Լայն ու տարողունակ է րաֆֆիագիտության ոլորտը։ Բազմաթիվ գրականագիտական հարցերի պատասխան լինելով՝ այն նաև 19-րդ դարի հայկական դպրոցի, կրթության վիճակի, որակի, ուսուցչական կազմի սպառչի նկարագիր է։

Փաստերն ապացուցում են, որ Ռաֆֆու գրականագիտական հայացքները, մանկավարժության բնագավառում նրա առաջադիմական մտքերը մեծ դեր են խաղացել ժամանակի կրթական համակարգում և այսօր էլ մեծ դեր ունեն ազգային դպրոցի և հայեցի կրթության բնագավառում։

Ժողովուրդը պետք է լուսավորություն ու կրթություն ստանա իր մայրենի լեզվով ու գրականությամբ։ Այս համոզմունքով էր մեծանուն գրողը ընդգծում մայրենի լեզվի ու գրականության ուսուցման դերը ազգային առանձնահատկությունների պահպանման և սովորողների մտավոր զարգացման հարցում։

Ռաֆֆու ժամանակաշրջանում առաջավոր մտավորականմերը փորձում էին հրաժարվել ուսուցման անհատական, խմբակային, խցային ձևերից և ուսումը կազմակերպել աշակերտական համասեր կազմով, կանոնավորված դասացուցակով, դաս-դասարանային ձևով։

Ռաֆֆին կողմնակից էր Արևելյան և Արևմտյան Հայաստանի ոչ միայն գիմնազիաներում, թեմական դպրոցներում, ուսումնարաններում, այլև ծխական բարեկարգ դպրոց-

*Հոդվածն ընդունվել է 13.12.17։

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնը։

ՄԵՍՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

ներում ու վարժարաններում ուսուցման կազմակերպման գերիշխող ձևը դարձնել դաստարամային համակարգը:

1870-ական թվականներին Վերին Ագուլիսի, հետո Թավրիզի Արամյան դպրոցներում նա դասավանդել է հայոց լեզու և պատմություն: Իբրև ուսուցիչ Թավրիզում պաշտոնավարել է 1875թ. օգոստոսի կեսերից մինչև 1877թ. մայիս-հունիս ամիսները, իսկ վերին Ագուլիսում 1877թ. հոկտեմբերից մինչև 1879թ. մայիսի կեսերը:

Մի շարք աղյուրներ վկայում են, որ Արամյան դպրոցում աշխատելու ժամանակ Ռաֆֆին նպատակ ուներ թավրիզում հիմնել օրիորդաց դպրոց: Այս հարցի շուրջ նա ոչ միայն խորհրդակցում, խոսում և վիճում է, այլև դիմում է գործնական քայլերի: Նրա անմիջական ջանքերի շնորհիկ հիմնվում է մի ընկերություն, որի նպատակն էր տեղում բաց անել օրիորդաց դպրոց: Ընկերության համար կանոնադրություն են նշակում Հաջինյանն ու Ռաֆֆին: Վերջինս հանձն է առնում առանց վարձատրության վարել դպրոցի պարտականությունը, նրա կինը՝ Աննա Ռաֆֆին պետք է դասեր տար՝ նոյնպես առանց վարձատրության: <<Նամակ Ագուլիսից>> հուշագրության մեջ նշվում է, որ <<1877թ. սեպտեմբերի երկրորդ կեսին, Ռաֆֆին, մեկնելով Վերին Ագուլիս, մինչև 1879թ. մայիսի վերջերը մնում է այնտեղ՝ գրադեմենով տեղի երկան դպրոցի բարձր դասարամների հայոց լեզվի և պատմության ուսուցիչ պաշտոնը: Մանկավարժական աշխատանքը գուգակցելով հասարակականի հետ, Ռաֆֆին ծերնարկում է Ագուլիսում հիմնել <<Գողթնեցոնց լուսավորական ընկերություն>> անունով կազմակերպությունը, որի նպատակը պեսը է լիներ ժողովրդի չքավոր դասից ուսուցիչներ պատրաստել և ընկերության հաշվին գործեր տպագրել ու ձրի բաժանել չքավորներին>>:[1]

Ավետիս Սարգսյանի <<Վկայություն Ռաֆֆիի մասին>> հուշագրության մեջ նշվում է, որ Ռաֆֆին բնավերությամբ հանգիստ ու խաղաղ մարդ էր: Իբրև ուսուցիչ շատ սիրված էր աշակերտներից, շատ լավ հայոց պատմություն գիտեր և ոգևորությամբ էլ ավանդում էր: Հաճուքրով լսում էին նրան: Հուշագիրը ցավով է նշում այն հանգամանքը, որ Ռաֆֆու թշնամիները բազմիցս փորձել են հեռացնել նրան դպրոցից, որը շատ ծանր տպավորություն է թողել Ռաֆֆու աշակերտների վրա: Վարդան Թումանյանը վկայում է, որ ինքը թավրիզի Արամյան դպրոցում աշակերտել է Ռաֆֆուն: Նա ևս խոսում է Ռաֆֆու հակառակորդների մասին, որոնցից ազատվելու համար Ռաֆֆուն ճանապարհում են Զուլֆա:

Մի շարք հուշագիրներ վկայում են աշակերտների սերը Ռաֆֆու հանդեպ: Նրանք նոյնիսկ օգնում են հրատարակելու Ռաֆֆու երկերը: Որպես ուսուցիչ Ռաֆֆին խիստ էր, բայց աշակերտները հաճակուում էին նրան, որովհետև նրա մեջ տեսնում էին լավ մարդուն ու լավ մանկավարժին:

Թեև երկար չմնաց թավրիզում, բայց այդ երկամյա միջոցին էլ քննադատելով հայ հասարակության թույլ ու սիսակ կողմերը, նա կարողացավ պատրաստել թարմ ու ժամանակի ոգուն համապատասխանող նոր ուսուցչուն նորակազմ ուսուցչական խմբի աշխատակցությամբ: Երիտասարդ ուժերը, դպրոցավարտ աշակերտները թավրիզում սկսեցին կազմել ընթերցարան-գրադարաններ, թատերական ներկայացումներ, զանազան բարեգործական ընկերություններ և օրիորդական դպրոցներ, որոնք մեծ դեր խաղացին Աստրաստականի հայաբնակ գյուղերում և քաղաքներում:

Ալ. Շիրվանզադեն վկայում է, որ շատ ամգործ ուսուցիչներ են դիմել Ռաֆֆուն ու օգնություն ստացել. <<Քանի-քանի ամոթխած մուրացկաններ, որ չեին ուզում բացարձակ ողորմություն հավաքել, շատ անգամ նրան են դիմել և նպաստ ստացել, քանի-քանի հիվանդ տաճկահայերի է օգնել և քանիսի ճանապարհածախսը հոգացել: Եվ այս բո-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

լորդ անում էր գաղտնի, առանց յուր արածի մասին փողեր փչելու և թմբուկներ զարկելու>>:[2]

Րաֆֆու խորին համոզնունքով՝ ուսուցչի զարգացման համար պետք է ստեղծեր նյութական ապահով պայմաններ, որ նա կարողանա բազմակողմանիորեն զարգանալ, տիրապետել հոգեբանության, մանկավարժության և մեթոդիկամերի ժամանակակից պահանջներին:

Մանկավարժական աշխատանքը մեծ հայտնություններ բացեց Րաֆֆու առաջ: Նա հասկացավ, որ <<Կյանքը ոչ բոլորովին գուրկ է մեր գյուղացի մամուկների համար հոգեկան և մտավոր սնունդից, որ մատակարարում է նրան ժողովրդական բանաստեղծությունը, որ դեռևս պահանջված է իր մաքուր, լուսապայծար պարզության մեջ:

Րաֆֆին այն կարծիքին էր, որ <<մի ազգի կամ մի ժողովրդի բարոյական և մտավոր պատկերն ավելի ճշտությամբ երևում է նրա բանաստեղծության մեջ. Կամենում են ձանաչել նորա հոգին, կարող նորա երգերը>>:[3]:

Գրականության կրթող, դաստիարակող ու զարգացնող նշանակությունը այսպէս է բնութագրում Րաֆֆու ծրագրային <<Կյանքը>> վեայի հերոսներից մեկը՝ Ավանը. <<Մենք մեր դպրոցից ենք սպասում, բայց ժողովուրդը ինքը մի մեծ դպրոց է, որին պետք է կրթել, որին պետք է ուղղություն տալ, որի մեջ պետք է զարգացնել առողջ մտքեր, բարձր գաղափարներ, որի մոլորություններն ու կեղտը պետք է մաքրել, իսկ դա այլ կերպ չի կարող լինել, եթե չենք տա նրա ծեռքը ընթերցանության գրքերը: Եվ այդ գրքերից ամենագորեղ կերպով ագրում է նրա վրա վեաը, բանաստեղծությունը: Մի լավ գիրք կարող է փորկել մի ամբողջ ազգ... Ինչ ազգ բանստեղծություն չունի, նա հազիվ թե ընդունակ լինի իր համար մի գիր ստեղծել մարդկային հասարակությունների մեջ>>:[4]

Խստորեն քննադատելով ուսուցման բարացած մեթոդները Րաֆֆին պաշտպանել և ինքն էլ իր աշխատանքի ընթացքում կիրաւել է աշակերտների ստեղծագործական կարողություններն ու ինքնագործունեությունը զարգացնող մեթոդներ. <<Ես բախս եմ ունեցել 2 տարի մի մեջ գյուղում վարժապետ լինելու. Շարադրության առաջին դասերը ես տալիս էի, որ աշակերտներն ու աշակերտուիկիները գրեին իրենց լսած առակներն ու առածները, երբ մի փոքր զարգանում էին, ես գրել էի տալիս իրանց գիտցած հեքիաթները: Որքան շատ հեքիաթներ իմանում էին նրանք: Ամենահմուտ վիպասանը չէր կարող այնպէս պարզ, այնպէս բնական խոսքերով շարադրել մի հեքիաթ, որպէս գրում է մանուկը. Նրա տղա հասակին խիստ հատուկ է մարդկության տղայամսության ստեղծագործությունը>>:[5]

Իր ժամանակ ընդունված մայրենի լեզվի և գրականության ուսուցման մեթոդների շարքում Րաֆֆին մեծ ուշադրություն էր դարձնում էքսկուրսիաներին, ճանապարհորդություններից աշակերտների ստացած տպավորությունների գրական շարադրանքին և արտադասարանական ընթերցանությանը: Նա անձնական նախածերնությամբ ծեռք է բերում 700 կտոր գիրք, թավրիգում բացում ընթերցարան, որի ակտիվ հաճախորդներից էին Արամյան ազգային ուսումնարանի սաները:

Որպէս հմուտ մանկավարժ՝ նա պահանջում էր սովորողներին բազմակողմանի կրթություն և դաստիարակություն տալ: Նա գտնում էր, որ բավական չէ կրթել միայն միտքը, ազնվացնել հոգին, պետք է կրթել և մարմինը:

Հետևելով մեր մանկավարժության դասական ավանդույթներին, Րաֆֆին կարևորում է խաղի դերը երեխայի կյանքում: Նա ցավում է, որ երեխան փոքր ժամանակակից դարնում է դանդաղկոտ, աշխուժությունն ու երանդը խառնվում են նրա մեջ և դեռ չմանկացած, ծերանում է նա: Րաֆֆին բերում է մի շարք խաղերի օրինակներ, որոնք մնացել

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Են հայերի անցյալից, երբ մեր նախնիները մի առանձին հոգ էին տանում՝ իրենց զավակ-մերին կրթելու մարմնամարզական վարժությունների մեջ:

Ազգային խաղերից է մուշտեկրիվը՝ այն պատմական խաղերից մեկը, երբ գենքերը տակավին կատարելագործված չէին, և մարդը ստիպված էր իր զորավոր բազուկները կրթելու, որ հարկադրված ժամանակ գործի դներ իր թշնամու դեմ:

Գոտելախտին նոյն պատերազմական թնավորությունն ունի: Արթուրման (ուստոնու) և վազը (վազ տաղը) այն մարզությունների տեսակմերից են, որոնց մեջ մի ժամանակ վարժվում էին նաև սպարտացոց մանուկները:

Վազը կամ վազ տաղն այն ծնով, որ կատարվում է մեր մանուկների մեջ, մի դժվարին վարժություն է թոքերը զարգացնելու և ոտներին արագաշարժություն տալու համար: Մականախաղը (հոլ) խաղում էին մեր նախարարների որդիքն անգամ: Մնացած խաղերի մեջ նշանավոր են ճանը (վեգ) և դաման (շարութար), վերջինը շախմատի խաղի նմանություն ունի և խաղում են ավելի զարգացած տղաները: [6]

Ռաֆֆին խարազանում է դաստիարակության բացանող, սպանիչ եղանակի հետևանքները, որ երեխայից խոլում է նրա ինքնուրույն, ազատ զարգացումը, բարոյապես մերցնում է նրան, նա իր ամբողջ կյանքում մնում է երկշու, թուլասիրու, խոնարիվող և գլուխը ծրող ամեն մի գորության առջև:

Նա գտնում է, որ երիտասարդությունն է այն թարմ ուժը, այն մանուկ և աճող գորությունը, որից կախված է ժողովրդի առաջադիմությունը և հատկապես նրա ապագան:

Ռաֆֆին դատապարտում էր աղքատ երեխաների առջև դպրոցների դոները փակելը: Այս առիթով դիմում է բարերարներին, հիմնադիրներին՝ ուշադրություն դարձնել այս երևոյթի վրա:

Մի շարք հոդվածներում Ռաֆֆին խոսում է դպրոցների դրության բարելավման մասին, բարձր է զնահատում այն երախտավոր գերդաստաններին, որոնց մասուցած բարերարությունները Ազուլիսի թե դպրոցներին, թե վանքերին ու եկեղեցիներին, միշտ անմոռաց կմնան ամեն մի ազուլեցու սրտում: <<Նման ազգաստիմը միշտ արժանի է պատվելու>>:

Իր նամակներում Ռաֆֆին բազմից խոսում է ուսուցման մեթոդների առաջավոր սկզբունքների մասին: Նա ուզում էր իդեալական տեսնել ազգային դպրոցը, կատարյալ նրա ուսուցիչը: Իր բարեկամ < Կարապետյանին գրած նամակներից մեկում նա այն միտքը է հայտնում, որ երբ վարժապետը ծեծի օգնությամբ է ստիպում աշակերտին սովորել իր դասերը, դա նրա անհմտության գլխավոր նշաններից մեկն է, որովհետև դա ցոյց է տալիս իր նկատմամբ աշակերտների մեջ սեր, պատիկ ու համակրանք ներշնչելու վարժապետի անընդունակությունը: Եթե աշակերտը հարգում և սիրում է իր վարժապետին, ապա նա միշտ կապտրաստի նրա դասերը՝ ուսուցչի դժգոհությանը արիթ չտալու համար: Իսկ երբ վարժապետը գործի է դնում իր կոպիտ ֆիզիկական ուժը, նշանակում է նա դեռ չի գրավել աշակերտի ակնածությունը դեպի ինքը:

Կրթության ու դաստիարակության գործում Ռաֆֆին մեծ դեր է տալիս ընտանիքին:

Պետք է ճիշտ կողմնորոշել երեխային, փորձել ճիշտ ուղու վրա դնել նրա երևակայությունը, աշխարհի, շրջապատի նկատմամբ նրա պատկերացումները:

<<Հայ երիտասարդությունը>> հոդվածում Ռաֆֆին վերլուծում է ընտանեկան, ազգային բարբերն ու սովորույթները, գյուղական կյանքի լուսավոր ու ստվերու կողմերը փորձելով հայ մտավորականի ուշադրությունը բևեռել բացասական կողմերի քննադատությանը, գյուղական գեղեցիկ սովորույթների պահպանանը: Բազմաթիվ խորհուրդներով Ռաֆֆին փորձում է ճիշտ ուղու վրա դնել երիտասարդության գործելակերպը: Հայ ուսանողի բարոյական կերպարը կարևորելով՝ Ռաֆֆին քննադատում է այն երիտա-

ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

սարդներին, ովքեր իրենց կյանքն անց են կացնում կատարյալ դատարկության մեջ՝ անձնական շահը վեր դասեղով հասարակականից:

1878 թվականին հրատարակած <<Հայ կինը>> հոդվածում Շաֆֆին գրում է. <<Առհասարակ շատ սիսակ կարծիքներ են կազմվել արևելքի կանանց մասին ընդհանրապես, իսկ մեր մեջ հայ կնոջ մասին՝ մասնավորապես. Մինչև անգամ նշանավոր հեղինակներ, կամ պիտի այլով հավշտակված, նրանց պատկերացնում են որպես հարեմի զարդարանք, որպես ընտանեկան սրբարանի կուռք և կամ բոլորովին արհամարհելով, ստրուկ բարը տեղի և անտեղի կացնում են նրանց ձակատին: >>

Եթե <<կինը է մարդկային ընկերության գիշավոր քաղաքակորիչ տարրերից մեկը, որպես ասում են գիտնականները, ուրեմն պետք է լավ ուսումնասիրել նրան: Եվ այդ կինի իմ հետազոտության նպատակը>>:[7]

<<Գեղջկուիին>>, <<Քաղաքացին>> վերնագրերի տակ Շաֆֆին խոսում է կնոջ մտավոր զարգացման, ընտանեկան սովորույթունների, կնոջ ընտանեկան դերի մասին նշելով և դրական և բացասական կողմերը: Հայ ժողովունի ընտանեկան ապագան Շաֆֆին կախված է տեսնում տեղի դպրոցից: <<Նամակ Ագուլիսից>> հոդվածում, որ գրվել է Հայկանուշյան օրինորդաց դարբոցի 10 այլա տարեդարձի առթիվ, խոսում է ընտանիքի դերի, հասարակության մեջ ունեցած գործունեության մասին: Ընտանիքն է այն հոդը, որի մեջ գոյություն է ստանում մանուկը: Վստեղ են ամփոփված նրա կյանքի սկզբնական ժիշերը, որոնք խորին արմատ են ծգում, աճում են այն աստիճան, որքան արգավանդ է հոդը, ծաղկում են, պատարերվում են այն աստիճան, որքան կենսատու են նրան շրջապատող լուսը և ջերմությունը:

Շաֆֆին ընտանիքը համարում է երեխայի աշխարհը: Երեխան աշխարհ է մտնում բնությունից բոլորովին մաքուր և ամարատ: Նա այնքան անմեղ է լինում և մրամիտ, որ չգիտե որոշել չարն ու բարին: Նրա սիրուն այնքան պարզ է լինում, որ հայելու նման ցոլացնում է իր մեջ ամեն տեսակ գեղեցիկ ու տգեղ պատկերներ:

Նրա հոգին այնքան զգայուն է լինում, որ անգիտակցաբար ընդունում է ամեն լավ և կամ վատ տպավորությունները:

Շաֆֆու խոր համոզմունքով ընտանեկան օջախի մեջ սրբագրություն է երեխան իր ազգային ինքնուրույնության 2 ամենամեծ առանձնահատկություններով, որպիսիք են կրոնը և լեզուն: Ընտանիքում է դրվում երեխայի դաստիարակության հիմքը, և այս հիմքը որքան ամուր է ու կանոնավոր, այնքան հաստատուն կերպով բարձրանում է նրա վրա կյանքի շինակածքը:

Ընտանիքից է երեխան ստանում այն լուսը, որ պիտի առաջնորդե նրան կյանքի ձանապարհի բոլոր շավիղներ վրա:

<<Կրթության խնդիրը հայոց մեջ>> հոդվածում Շաֆֆին ուշադրության է արժանացնում այն հարցը, որ հայեցի դաստիարակությունը կատարվում է նաև դպրոցում: Եթե հետամնաց է դպրոցը, հետամնաց է նաև հայեցի կրթությունն ու դաստիարակությունը:

<<Դպրոց և եկեղեցի, այդ երկու հիմնարկությունները հայերի մեջ միացած են եղել ամենասերտ կապերով: Դպրոցը շինում էր եկեղեցվու մոտ, դպրոցը կառավարվում էր եկեղեցվու եկամուտներով և եկեղեցականների ծերքերով, և այդպես, փոխադարձաբար լրացնում էին միմյա մյուսի պահանջները>>:[8]

Այսինքն՝ հոգու և մտքի կրթությունը իրականացնում էին դպրոցն ու եկեղեցին:

Շաֆֆին քննադատել է կույր հավատի ուսուցումը: Դա նշանակում է <<Երեխայությունից սպանել նրա մեջ մտածության ուժը և խլել նրանից քննադատական հոգին>>:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Րաֆֆին հավաստում է, որ դասագիրքը ուղեցույց է միայն, ուսուցիչն աշակերտը պիտի հավատա, նա պիտի ըմբռնի ուսուցիչ խոսքի դաստիարակիչ նշանակությունը:

Աշակերտին պիտի հասցնել կրոնի բարոյական սկզբունքները: Դարողը մանկան մեջ պետք է արքանցի բարոյական զգացմունք, մաքրի նրա խիղճը, սովորեցնի սիրել, պաշտել այն ամենը, ինչ որ ձշմարիտ է, ինչ որ բարձր է ու աստվածային:

Ընտանիքը, եկեղեցին և դպրոցը պետք է դաստիարակեն, զարգացնեն մանուկին բոլոր բարոյական սկզբունքներով: Նրանք չպետք է մոլորեցնեն մանկանը, այլ պետք է դեպի ուղիղ ճանապարհ առաջնորդեն:

<<Տիկիության դեմ պատերազմելու միջոցը ուսումնարանն է>>,- ընդհանրացնում է Րաֆֆին:

Րաֆֆին բազմից խոսել է մանկավարժական ժամանակակից խնդիրների, նոր դպրոցների, նոր ուսումնարանների, դրանց վերակառուցման մասին:

Նա գտնում է, որ գիտությունների և արիեստների դասաստվությունը մայրենի լեզվով պիտի լինի և երեխան փոքրուց պիտի սովորի մտածել և խոսել ազգային լեզվով: Իսկ մենք չունենք այդ արարկաներին հարկավոր ծեռնարկներ: Րաֆֆին քննադասում է այն կազմակերպություններին, որոնք չեն մտածում կրթության արաջնահերթ խնդիրների մասին: Ժողովրդի մեջ պիտի ընթերցանություն տարածել: Սակայն ցավալի է, որ գործեր չունենք, որոնց միջոցով կարելի լինի հասնել դրան: Ճիշտ է, մասնավոր անձանց նվիրատվությամբ տպագրվում են գրքեր, բայց դա հաստատուն չի, որովհետև գոհարերությունը որքան գեղեցիկ երևույթ է, այնքան և ժամանակավոր է, անտևողական: Ուրեմն գրքերի տարածելը ժողովրդի մեջ ոչ թե մասնավոր մարդու, այլ մի կազմակերպված ընկերության գործ է:

Ահա թե ինչո՞ւ Րաֆֆին հաճախ է աջակցել տպագրական ընկերությունների կազմակերպման, աշակերտներից լավագույններին արտասահման ուղարկելու, օգտավետ հրատարակությունների համար մշտական դրամագրություն ստեղծելու գործընթացին:

Ուսուցման ու դաստիարակության մեջ Րաֆֆին մեծ դեր է տվել ժողովրդական բանահյուսության ժամրերի ուսուցմանը: Ավանդույթների, առասպելների, գրույցների ծնունդը ծնունդ է ժողովրդի երևակայության:

<<Մի ազգի բանաստեղծությունն այն ժամանակ միայն կենդանանում է և նույն ազգի բնավորության հատկամիջ կերպարանքն է ստանում, երբ նա ծագում է նրա ավանդություններից>>[9], - գրում է նա:

Ճանաչողական մեծ նշանակություն ունեն մի շարք խիստ հետաքրքրական ավանդությունների մեկնաբանությունները Րաֆֆու կողմից: Վերլուծելով ու գնահատելով Գ. Մրկանձույանցի <<Գրոց ու բրոց կամ Սաստինցի Ղավիթ>> գիրքը, Րաֆֆին գնահատում է խիստ հետաքրքրական ավանդությունները Աստղիկ դիցուհու, Սուշ Երկրի անվան ժագնան, հարալեզների մասին պատմության, Շամիրամի անվան, Շամքար ժայռի պատմության առեղծվածներին վերաբերող: <Ետաքրքիր մեկնաբանություններ կամ Բելի անվան սոուզաբանության մեջ: Ղարաբաղի և Ղարադաղի կողմերում Բելի անունը առակ է դարձել. յուր հպարտություններով հիմարացած մարդուն հայր միշտ ասում է <<բելացել է>>, այսինքն Բելի բնավորություն է ստացել: Բազմաթիվ են հետաքրքիր ուսուցողական մեկնաբանությունները:

Ուսուցողական ու ճանաչողական են Րաֆֆու կողմից հայկական ավանդույթների վերծանումը: Բանասերի լրջությամբ, գիտական պատշաճ մակարդակով Րաֆֆին քննում է հեթանոսական հավատալիքները: <<Աստվածները և նրանց սերունդը ժողովրդական երևակայության ծնունդ են: Ամեն ազգի դիցարանության մեջ երևում է նոյն ազգի

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Վիլիսովիայությունը, այլև նրա բնավորությունը և ճաշակը>[10] 10.- կարդում ենք Ռաֆֆու գրքում:

Ռաֆֆին շեշտում է Գ. Մրվանծոյանցի գրքի աշխարհագրական նշանակությունը: Այն համարելով մի օգտավետ աշխատություն՝ Ռաֆֆին հույս է հայտնում, որ գրքում օրինակ կիանդիսանա շատերի համար: Անգամ <<Մշակի>> թղթակիցների ուշադրությունն է նաև հրավիրում Մրվանծոյանցի երկի վրա:

Մեծ գրողը յուրօրինակ մոտեցում ուներ ժողովրդական երգերի հանդեպ: Նա զիտական, մասնագիտական լրջությամբ ուսումնասիրել է մշեցոց ու վանեցոց երգերը, որոնց մեջ ընթերցողը տեսնում է մի կենդանի ժողովուրդ, որը ապրում է, մտածում և սիրում: <<Քնար մշեցվոց և վանեցվոց>> գրքում կի առթիվ հոդվածում Ռաֆֆին Արիստակես Սեղրակյանի հավաքած երգերը բանասիրական քննության է ենթարկում՝ արժադարձությունը, երգերի ազգային բնույթը, ինքնուրունույնությունը, առօրյա կյանքի հետ կապը: Հատկապես նա գնահատում է այդ երգերի բնական գեղեցկությունը. <<Դրանք նշանավոր են, որպես անկեղծ թոթովանք, որ բխում է նորա սրտից և նորա կյանքից: Եթե կամենում են ծանաչել ժողովուրդի հոգին, կարդա նրա երգերը>>[11]

Ռաֆֆու դերը մեծ է նաև մանկական գրականությանը ներկայացվող պահանջների բացահայտման առումով: Ճիշտ է, նա գուտ մանուկների համար չի ստեղծագրծել, սակայն նրա ամբողջ ստեղծագրծությունը դաստիարակության մի հզոր դպրոց է ներկա և գալիք սերունդների համար:

Հայտնի է, որ 1882թ. կեսերին Տիգրան Նազարյանը սկսում է նախապատրաստական աշխատանքներ տանել 1883թ. սկզբին Թիֆլիսում <<Ալբյուրի>> անունով մի մանկապատանեկան ամսագիր հրատարակելու համար: Նա նախնական պայմանագիրվածությունն է ծեռք բերում նշանավոր գրողների հետ, որպեսզի անխափան գործի ամսագիրը:

Պայմանավորվածության համաճայն՝ Ռաֆֆին <<Ալբյուրի>> ընթերցողների համար թարգմանում է Տուրգենևի <<Ալավեններ>> պատմվածքը, հանձնում է <<Զրաբերդ>> ակնարկը, խոստանում է գրել <<Տարվա եղանակները պատկերում>> ակնարկը և այլն: Խմբագիրը նկարիչ Նիկոլայ Կարագինին տպակը <<Զրաբերդ>> ակնարկի ծեռագիրը՝ հանձնարարում է Ռաֆֆու նկարագրության հիման վրա իրականացնել ապագա ամսագրի շապկի նկարը: Ընդառաջելով ամսագրի խմբագիր S. Նազարյանին, Ռաֆֆին <<2 ամիս Ալվանքի և Սյունյաց աշխարհներում>> ուղեգրության Զ գլխից առանձնացնում է Զրաբերդին վերաբերող հատվածը և, վերամշակելով, հանձնում խմբագրին: Երբ այն լույս է տեսնում, <<Մեղու Հայաստանի>> լրագիրը հրատարակում է Հայկունու <<Ներողություն, բայց և մի դիտողություն>> խորագրով հոդվածը: Ռաֆֆու հակառակորդը սկսում է ծաղրել նրան այն բանի համար, որ Զրաբերդի մեջ դարարացի հայ աղջկան նկարագրելու ժամանակ գրողը մանկական ամսագրում խոսել է նաև մերկ սրունքների մասին: Ասել է, թե Ռաֆֆին ճիշտ չի պատկերացնում ամսագրի պահանջները: Նա պահանջում է Ռաֆֆուն հեռացնել մեր գրականությունից, բայց և խոստովանում է, որ նրա անունը այնքան մեծ է մեր մեջ, որ դա հնարավոր չէ: <<Մշակի>> երեք իրար հաջորդող համարներում լույս է տեսնում Լեոյի <<Ալբյուր ամսագրի արիթով>> հոդվածը, որտեղ նա անդրադառնում է նաև Ռաֆֆու ակնարկին: Ռաֆֆու երկը գնահատում է ոմի նրբության, գեղեցկության առումով: Ընթերցողը նրա հետ գնում է, պատում է նրա հետ, տեսնում է ամեն ինչ և հոգեպես տրամադրում է այնպես, ինչպես ճանապարհորդը: Այս հոդվածը տեղ է գտել Տեր Ղևոնյանի <<Մայրենի լեզու>> խորագրով դասագրի 4-րդ գրքի 6-րդ տոպագրության մեջ, հետո գետեղվել է այդ գրքի բոլոր հրատարակությունների մեջ: Սա վկայում է այն մասին, որ <<Զրաբերդ>> հեղինակի՝ մանկական գրակա-

ՄԵՍՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

նույրան պահանջներին համապատասխանող երկ է: <<Զրաբերդ>> թե ընթերցանության հետաքրքիր նյութ է, և թե ճանաչողական դեր ունի, զարգացնում է սովորողների ճաշակը, նրանց սերդ դեպի մայրենի լեզվի ընթերցանությունը:

Շաֆֆին կենդանի հանրագիտարան է սերունդների համար: Ճանապարհորդությունների ընթացքում էլ նա գրուցում էր 100-ամյա տասիկների ու պապիկների հետ, նրանց պատմածք գրի առնում իր հուշատեսդրությունը:

<<Բավական չեն մեր վանքերում պահպանված ծեռագիր վավերագրերը: Դրանք չոր ու ցամաք տարեգրություններ են: Պատմագրություն ստեղծելու համար հարկավոր է նաև կենդանի նյութ, որը կուտակված է ժողովրդի կենցաղի մեջ>>,- գրում է նա [12]:

Օժոված լինելով ստեղծագործելու բնաւոր տաղանդով, պայծառ հիշողությամբ, իր գրական և մանկավարժական գործունեության ընթացքում Շաֆֆին ստեղծել է մնայուն արժեքներ, որոնք դարեր շարունակ կվրածն սերունդների միտքն ու հոգին:

Պատմություն ստեղծելու համար անհրաժեշտ է խոսեցնել քարե վկաներին, ուսումնասիրել հիմավուրց վիմագրությունները, գրի առնել ժողովրդի մեջ մնացած պատմությունները, ունկնդրել բանահյուսության ակունքներին, և ավելի հաճախ դիմել ժողովրդին: Սա էր մեծ գործի նպատակը:

Շաֆֆու բազմաթիվ երկեր՝ պատմավեպերը, ժրագրային-քաղաքական երկերը, ուղեգրություններն ու պատմագիտական ուսումնասիրությունները, պատմվածքները, կրթող ու դաստիարակող երկեր են, մնայուն արժեքներ, կենդանի հանրագիտարաններ՝ ուսուցողական ու ճանաչողական առաստ նյութերով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ռաֆֆին ժամանակակիցների հուշերում, Եր., 1986, էջ 258:
2. Նոյյն տեղում, էջ 63:
3. Ռաֆֆի, երկերի ժողովածու, հաստոր 9, Եր., 1958, էջ 81:
4. Ռաֆֆի, հաստոր 5, Եր., 1956, էջ 471:
5. Ռաֆֆի, հաստոր 9, էջ 396:
6. Ռաֆֆի, հաստոր 11, Եր., 1991, էջ 205:
7. Նոյյն տեղում, էջ 99:
8. Ռաֆֆի, հաստոր 10, էջ 247:
9. Նոյյն տեղում, էջ 228:
10. Նոյյն տեղում, էջ 235:
11. Ռաֆֆի, հաստոր 10, էջ 519:
12. Ռաֆֆին ժամանակակիցների հուշերում, Եր., 1988, էջ 278:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ռաֆֆին՝ կրթող և դաստիարակող
Անահիտ Աթայան

Հողվածում խոսվում է հեղինակի մանկավարժական հայացքների, աշակերտների ստեղծագործական կարողությունների, ինքնագործունեությունը զարգացնող մեթոդների կարևորության և կիրառման մասին:

Հայկական դպրոցներում դասավանդելով հայոց լեզու և պատմություն, մանկավարժական աշխատանքը գուգակցելով հասարակականի հետ՝ Ռաֆֆին քննադատել

ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԻՐԱԾՈՒ 2018

Է ուսուցման քարացած մեթոդները, իր հոդվածներում և գրառումներում բացահայտել ուսուցման առաջավոր մեթոդների դերը կրթության, ընտանեկան դաստիարակության, ազգային բարքերի ու սովորույթների ձևավորման գործընթացներում:

«Հայ երիտասարդությունը», «Հայ կինը», «Կրթության խնդիրը հայոց մեջ» և նման հոդվածներում Ռաֆֆին պահանջում է կրթել ոչ միայն սովորողների միտքը, այլ նաև մարմինը, ազնվացնել հոգին:

Ռաֆֆու դերը մեծ է նաև մանկական գրականությանը ներկայացվող պահանջների բացահայտման առումով:

РЕЗЮМЕ «Раффи - учитель и воспитатель» Анаит Атаян

Ключевые слова: окаменевшие методы, самодеятельность, семейное воспитание, национальный колорит, традиции, детская литература, педагогические взгляды.

В статье говорится о педагогических взглядах автора, о творческих возможностях учеников, о важности методов развития самодеятельности и его использования. Преподавая армянский язык и историю в армянских школах, проводя параллельно воспитательные и общественные работы, Раффи критиковал окаменевшие методы преподавания, в своих статьях и записях раскрывая важность роли новых методов обучения, образования, семейного воспитания, в процессе формирования национального колорита и традиций. В статьях «Армянская молодежь», «Армянская женщина», «Задача образования у армян» и им подобных Раффи требует воспитывать не только мысль обучающегося, но и его тело, очистить душу. Велика также роль Раффи в раскрытии требований, предоставленных детской литературой.

SUMMARY Raffi-a Teacher and an Educator Anahit Atayan

Keywords: petrified methods, amateur performances, family upbringing, national color, children's literature, pedagogical viewpoints.

In the article the author's pedagogical viewpoints, the creative opportunities of pupils, the importance of the development and use of the methods is touched upon. Teaching Armenian and History in schools and combining it with upbringing and social works Raffi used to criticize the petrified methods of teaching; in his articles and records he revealed the importance of the new methods of teaching, education, family upbringing in the process of the formation of national color and traditions. In the articles "The Armenian Youth", "The Armenian woman", "The Role of Education of the Armenians" and the like Raffi demands to mentor not only the thoughts of the learners but also his body and to clear their souls as well. Raffi's role in setting requirements for children's literature is also very significant.